ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

28-ը մայիսի 2024թ.

Շնորհավորական ուղերձ Մայիսի 28-ի՝
Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրման օրվա առթիվ

1918 թվականի մայիսյան իրադարձությունները հայոց պատմության փառավոր էջերից են, հպարտության ու ոգեշնչման մեծ աղբյուր յուրաքանչյուրիս համար: Հարյուրամյակների սպասումից հետո մեր ժողովուրդը նվաճեց բաղձալի անկախությունը, Մայիսյան հերոսամարտերի հաղթական ելքով հռչակվեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը: Ազատագրական պայքարի ու հայկական պետականության ստեղծման ճանապարհին մեր ազգը թանկ գին է վճարել, ուստի առաջնահերթ ուզում եմ խոնարհումով հիշենք ու հարգենք մեզ փառահեղ հաղթանակներ պարգևած նվիրյալ հայորդիների հիշատակը:

20-րդ դարասկզբին հայ ժողովրդի պատմության ճակատագրական վայրէջքներն ու հրաշքի նմանվող վերելքները, այդ թվում 1918 թվականի պետականության ստեղծումը, փաստում են, որ համախմբան և արդար պայքարի շնորհիվ, մեր ազգը կարող է շտկել անելանելի թվացող իրավիճակներ ու կառուցել ամուր հիմքեր հետագա հաջողությունների համար:

Սիրելի՛ հայրենակիցներ.

Մայիսի 28-ի՝ հայոց պետականության վերածնունդը խորհրդանշող ազգային տոնի առիթով, շնորհավորում եմ բոլորիս.

Մարտահրավերներին դիմակայելու համար մաղթում եմ զինվենք նախ և առաջ մեր ավագ սերունդների հաստատուն կամքով ու տոկունությամբ, գալիք հաղթանակների մեծ հույսով և Արցախի ազատագրման, պետականության վերականգնման անսասան հավատով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ